Կարևոր է իմանալ.

❖ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմելն անվճար է:

❖ Պաշտպանին դիմելը չի կասեցնում դատարան դիմելու համար սահմանված ժամկետները:

❖ Միաժամանակ պետական մարմիններին, բացառությամբ դատարանների, դիմելը չի խոչընդոտում Պաշտպանին հասցեագրված դիմումի քննությանը:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 56ա
Հեռ.՝ +374 10 537651 (քաղաքային)
+374 96 116100 (բջջային)
116 (թեժ գիծ)
Էլ. հասցե՝ ombuds@ombuds.am
ombuds@ombuds.am

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Շիրակի մարզ, ք. Գյումրի
Միհեր Մկրտչյան 44/46
+374 312 41981

Տավուշի մարզ, ք. Իջևան
Անկախության փող., 9-րդ շենք
+374 263 40 116

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ
Կենտրոնական հրապարակ 4
+374 264 30116

Սյունիքի մարզ, ք. Կապան
Մելիք Ստեփանյան 6
+374 285 20116

WWW.OMBUDS.AM

BULGARIAN DEVELOPMENT AID
ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

ԵՐԵՎԱՆ
ՓԵՏՐՎԱՐ 2022

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

○ Ո՞ր դեպքերում կարելի է դիմել Պաշտպանին

Պաշտպանին կարելի է դիմել այն դեպքում, երբ աշխատանքային իրավունքները խախտել են՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք.
- պետության կողմից պատվիրակված լիազորություն ունեցող կազմակերպություններն ու դրա պաշտոնատար անձինք.
- հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպություններն ու դրանց պաշտոնատար անձինք:

○ Ո՞վ ունի Պաշտպանին դիմելու իրավունք

Պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ 18 տարին չլրացած անձը:

- **Պաշտպանին կարող են դիմել՝**
  - անձամբ.
  - ծնողը, զավակը կամ այլ մերձավոր ազգականը.
  - ներկայացուցիչը, այդ թվում՝ փաստաբանը.
  - հասարակական կազմակերպությունը՝ անձի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

○ Ինչպես դիմել Պաշտպանին

Պաշտպանին կարելի է դիմել՝

- Այցելելով մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ Երևան քաղաքում կամ մարզային ստորաբաժանումներում.
- Գրելով էլեկտրոնային նամակ Պաշտպանի էլեկտրոնային փոստին.
- Գրելով նամակ Պաշտպանի աշխատակազմի հասցեով.
- Զանգահարելով Պաշատպանի հեռախոսահամարներից որևէ մեկով:

○ Ի՞նչ ժամկետներում կարելի է դիմել Պաշտպանին

Բողոքը կարող է ներկայացվել **մեկ տարվա ընթացքում** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ կարող էր իմացած լինել իր իրավունքների խախտման փաստի մասին:

ՀՀ-ում գործում է ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ, որին՝

- Դիմելն անվճար է.
- Կարելի է դիմել՝ անկախ այն հանգամանքի գործատուն պետական մարմին է, թե ոչ պետական (առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, անհատ ձեռնարկատերեր և այլն).
- Կարելի է դիմել հետևյալ եղանակներով՝

✓ առցանց ՝ https://employeeprotect.am/am/report կայքի միջոցով,

✓ Զանգահարեք «Թեժ գիծ» ծառայություն՝ 8107 հեռախոսահամարով,

✓ Ուղարկեք բողոքը կամ հարցերը տեսչական մարմնի info@hlib.am էլեկտրոնային հասցեով

✓ Գրելով մեր ֆեյսբուքյան պաշտոնական էջին՝ https://www.facebook.com/hlib.am/.

✓ Մուտքագրելով հարցումը կամ բողոքը Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով՝ https://e-request.am/hy/ :

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում (https://www.hlib.am/contact/) առկա է մանրամասն տեղեկատվություն վերջինիս կենտրոնական ապարատի և տարածաշրջանային կենտրոնների վերաբերյալ՝ գտնվելու վայրերը, հեռախոսահամարները, հետադարձ կապ հաստատելու համար անհրաժեշտ տեղեկություններ: